ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունվարի 2023թ. N 01-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 79-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 24/22 արձանագրությունը՝ *որոշում եմ.*

1.2023 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայության դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ Լիկա Կարենի Հովհաննիսյանի (ծնված՝ 2018 թվականի նոյեմբերի 17-ին) համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2023 թվականի հունվարի 01-ից:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝
1) ապահովել կիրառված արտոնության կատարումը.
2)արտոնությունից օգտվողի կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

03.01.2023

X

VERIFIED OCSP 03.01.2023 12:06:57 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 03
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հունվարի 2023թ. N 02-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 18 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Ալվարդ Սեդրակի Արոյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Ալվարդ Սեդրակի Արոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 7 շենքի թիվ 18 բնակարանի (վկայական 0187223, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 18 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

04.01.2023

X

VERIFIED OCSP 04.01.2023 10:39:55 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2023թ. N 03-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված արխիվային տեղեկանքն ու Վարդան Հովակիմի Մարգարյանի լիազորված անձ Երմոնյա Նիկոլայի Մնացականյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնքի 6-րդ շարքի թիվ 17 (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0018-0001-ից) անշարժ գույքին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ-2 թաղամաս 3-րդ փողոց 1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 09.01.2023 11:18:16 GMT+4

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2023թ. N 04-Ա

ՎԱՂԻՆԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-11-րդ և 22.1-րդ կետերի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 16-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցվել են 1990 թվականին և հիմք ընդունելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի ԿԴ/13756/02/21 քաղաքացիական գործով վճիռը, չափագրման հատակագծերը և Վաղինակ Արշավիրի Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վաղինակ Արշավիրի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 107 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0011-0100-ից, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20226JBAQC) 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 53.58 քմ արտաքին (41.8 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 9.56 քմ արտաքին (6.28 քմ ներքին)

մակերեսով լողավազանը, 31.57 քմ արտաքին (30.83 քմ ներքին) մակերեսով ծածկը, 2.2 քմ մակերեսով աստիճանը և 0.99 քմ մակերեսով հենապատը ճանաչել օրինական:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների համար օրինականացման վճար չի գանձվում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 09.01.2023 11:32:12 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3003590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2023թ. N 05-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատկացված 0.085 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.00216 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, հիմք ընդունելով չափագրման հատակագծերը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրն ու Ալիկ Սամվելի Մանուկյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Գոհար Պարգևի, Ալիկ Սամվելի, Կարեն Սամվելի, Պարգև Սամվելի Մանուկյաններին և Լաուրա Գերմանի Պետրոսյանին պատկանող քաղաք Բյուրեղավան 4-րդ փողոցի 36 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0033-0004) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 34:

2. Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանաչել Գոհար Պարգևի, Ալիկ Սամվելի, Կարեն Սամվելի, Պարգև Սամվելի Մանուկյաններին և Լաուրա Գերմանի Պետրոսյանին սեփականության իրավունքը իրենց պատկանող 0.085 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-003-0033-0004) փաստացի ավել օգտագործվող 0.00216 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.08716 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում և պետական գրանցում կատարելու համար:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 09.01.2023 15:42:51 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք. հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2023թ. N 06-Ա

ԷՄՄԱ ԱԼԼԱԽՎԵՐԴՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Էմմա Ալլախվերդյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ***.

1.Էմմա Ալլախվերդյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43063404) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 35/73 հասցեում գտնվող 42 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար (N 01-23 ՈԽԾ թույլտվությունը կցվում է):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

☑ Recoverable Signature

[illegible].01.2023 12:34:40 GMT+4

[illegible]BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 11
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2023թ. N 07-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված արխիվային տեղեկանքն ու Վարդան Հակոբի Սանդրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի «Նուռնուս» այգետարածքի թիվ 16 տեղամասի թիվ 8 անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0146-0010) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11-րդ փողոց 42:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Signature

Signed by: BALASYAN HAKOB 3009590148 13:27:07 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հունվարի 11
ք. Բյուրեղավան